ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍ-ԻՐԱՆԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (XIX Դ. ՎԵՐՋ—XX Դ. ՍԿԻԶԲ)

ՍԱՄՎԵԼ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հայ-իրանական առևտրական և տնտեսական կապերն ունեն բազմադարյան ու հարուստ պատմություն։ Դրանք առանձնապես սերտացան XVII դ. սկզբից սկսած, երբ շահ Արբասի կողմից տասնյակ հազարավոր հայերի բռնագաղթեցման հետևանքով Իրանում առաջացավ բազմահազարանոց հայ գաղութ, որին վիճակված էր երկար ժամանակ նշանակալի դեր խաղալ Իրանի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքում։ Ամբողջ XVII դ. և XVIII դ. առաջին քառորդի ընթացքում Իրանի արտաքին առևտուրը գտնվում էր գլխավորապես նորջուղայեցի հայ վաճառականների ձեռքում։ Արևմտաեվրոպական երկրների հետ ավանդական առևտրական կապերի զարգացմանը զուգընթաց հայ վաճառականությունը XVII դ. կեսերից սկսած առևտրական կապեր է հաստատում նաև Ռուսաստանի հետ։ Այդ կապերը շարունակվում էին նաև XIX դ. կեսերին, երբ հայ վաճառականները դառնում են Ռուսաստանի հիմնական առևտրական ներկայացուցիչները Իրանում։

Ընդհուպ մինչև XIX դ. կեսերը Իրանում գործող հայ վաճառականներն արտաքին առևտրում կողմնորոշվում էին դեպի արևմտաեվրոպական արտադրություն։ Նրանք ավանդական սերտ կապեր ունեին արևմտաեվրոպական առևտրաարդյունաբերական խոշոր կենտրոնների՝ Լոնդոնի, Վիեննայի, Լայպցիգի հետ և Իրան էին ներմուծում գերազանցապես արևմտաեվրոպական արտադրության արդյունաբերական ապրանքներ։ Այսպես՝ 1837 թ. հայ վաճառականները Լայպցիգից և մասամբ Համբուրգից թավրիզ էին ներմուծել 4.312.592 ռուբլու արդյունաբերական ապրանք, մինչդեռ նույն թվականին Ռուսաստանից թավրիզ էր ներմուծվել ընդամենը 1.037.600 ռուբլու ապրանք[1]։ Արևմտաեվրոպական արդյունաբերական ապրանքների ներմուծմանը զուգընթաց հայ վաճառականները նշանակալի դեր էին խաղում նաև Իրանի արտահանման մեջ։ Սովետական հետազոտող Ն. Կուզնեցովայի տվյալներով XIX դ. կեսերին հայ վաճառականների ձեռքում էր գտնվում Իրանի ներմուծման 30—50 և արտահանման 30—60%-ը[2]։

Սակայն XIX դ. կեսերից սկսած իրադրությունը կտրուկ փոխվում է։ Իրանի առևտրում զբաղված հայ վաճառականները աստիճանաբար վերակողմնորոշվում են դեպի Ռուսաստանի արդյունաբերություն։ Նման վերակողմնորոշումը ուներ օբյեկտիվ պատճառներ։ XIX դ. կեսերից Ռուսաստանում արագորեն զարգանում էին կապիտալիստական հարաբերությունները։ Ճորտատիրական իրավունքի վերացումից հետո կարճատև լճացմանը հետևեց արդյունաբերության բուռն զարգացումը։ Ռուսաստանի արագորեն զարգացող արդյունաբերությունն արդեն դարի վերջերից սկսում է ուժեղ չափով զգալ արտաքին շուկաների կարիքը։ Միևնույն ժամանակ, ռուսական կառավարությունը տերիտորիալ նվաճումների քաղաքականությունից անցավ տնտեսական ներթափանցման քաղաքականության, որն ուղեկցվում էր պրոտեկցիոնիստա-

---

[1] «Русско-иранская торговля. 30—50-е годы XIX века. Сборник документов», составитель Н. Г. Куканова, М., 1984, с. 93, 96—97.

[2] Н. А. Кузнецова, Иран в первой половине XIX века, М., 1983, с. 186.

կան միջոցառումներով։ 1883 թ. ցարական կառավարությունը փակեց անդրկովկասյան տարանցիկ ուղին, որով արևմտաեվրոպական ապրանքներն ազատորեն ներթափանցում էին Իրան։ Ռուսաստանից արդյունաբերական ապրանքների արտահանումը խրախուսելու նպատակով կառավարությունը սկսեց պարգևատրումներ վճարել Ռուսաստանում արտադրված գործվածքների և շաքարի համար։ Այս ամենը լուրջ հարված հասցրեց իրանա-արևմտաեվրոպական առևտրին և մեծ չափով պայմանավորեց հայ վաճառականների շրջադարձը դեպի Ռուսաստան։

XIX դ. 70—80-ական թվականներին հայ վաճառականներն արդեն առանցքային դիրքեր էին գրավել Իրանի հյուսիսային շրջանների առևտրում։ Աստրախանի նահանգապետի 1871 թ. զեկուցագրի համաձայն Իրանի հյուսիսային շրջանների գյուղատնտեսական արտադրանքի մինչև $^{2}/_{3}$-ը գնվում էր հայ վաճառականների կողմից և արտահանվում Ռուսաստան[3]։ Նրանցից շատերն արդեն այդ ժամանակ նշանակալի առևտրական շրջանառություն ունեին։ Այսպես, 1870 թ. ռուսահպատակ Մինաս Մելիք Մուսեյանցը Բաքվի վրայով Ռուսաստան էր արտահանել 71.243 ռուբլու իրանական ապրանք[4]։ Ատրպատականում հայտնի վաճառական, ռուսահպատակ Իվան Միրզա Ավակովը 1872 թ. նույն ճանապարհով Ռուսաստան էր արտահանել 94. 754 ռուբլու ապրանք և Իրան ներմուծել 5.125 ռուբլու ապրանք[5]։ Առևտրական խոշոր շրջանառություն էին իրականացնում նաև իրանահպատակ հայ վաճառականները։ Օրինակ, իրանահպատակ Խաչատուր Տեր-Զախարյանցը 1876 թ. Աստրաբայի վրայով Ռուսաստան էր արտահանել 106.075 ռուբլու ապրանք և Իրան ներմուծել 24.470 ռուբլու ապրանք[6]։ Նույն թվականին Իրանում հայտնի Թումանյանցների առևտրական տան ներկայացուցիչ Սիմոն Թումանյանցը Աստարայի վրայով Ռուսաստան էր արտահանել 90.098 ռուբլու ապրանք և Իրան ներմուծել 12.450 ռ. ապրանք[7]։

Բազմաթիվ աղբյուրների վկայությամբ Ռուսաստանի հետ առևտուրը հայ վաճառականների ձեռքում էր գտնվում ոչ միայն Ատրպատականում, որտեղ նրանք ավանդաբար ուժեղ դիրքեր ունեին, այլև Գիլանում, Մազանդարանում, Աստրաբադում, Խորասանում։ Ի տարբերություն պարսիկ վաճառականների, որոնք հիմնականում զբաղվում էին մանրածախ առևտրով, հայ վաճառականները վարում էին գերազանցապես մեծածախ առևտուր և իրականացնում էին առևտրական համեմատաբար մեծ շրջանառություն։ Արխիվային տվյալների համաձայն, Բարֆրուշում՝ Մազանդարանի առևտրական գլխավոր կենտրոնում, Ռուսաստանի հետ առևտուրը գտնվում էր 7 հայ և 27 մահմեդական վաճառականների ձեռքում։ Սակայն, եթե 1884 թ. վերոհիշյալ 27 մահմեդականների առևտրական շրջանառությունը կազմում էր ընդամենը 400.000 ռուբլի, ապա հայ վաճառականների առևտրական շրջանառությունը հասնում էր 800.000 ռուբլու[8]։ Նրանք Բարֆրուշից Ռուսաստան էին արտահանում բամբակ, չոր միրգ և ներմուծում էին ռուսական շաքար։

Երկար ժամանակ հյուսիս-արևելյան Իրանի հետ Ռուսաստանի առևտուրն ընթանում էր բացառապես Բանդար Գյազի վրայով։ Պատահական չէ, որ հայկական առևտրական խոշոր տների և ընկերությունների ներկայացուցիչները հաստատվել էին Բանդար Գյազ-Շահրուդ-Սաբզևար առևտրական ուղու ողջ երկարությամբ և վճռորոշ դիրքեր գրավել հյուսիս-արևելյան Իրանի առևտրում։ Սակայն Անդրկովկասյան մարզը Ռուսաստանին միանալուց հետո հյու-

---

3 Архив внешней политики России (այսուհետև՝ АВПР), ф. «Персидский стол», д. 1806, 1869—1871, л. 7.

4 Центральный государственный исторический архив Грузинской ССР (այսուհետև՝ ЦГИА Гр. ССР), ф. 378, оп. I, д. 11061, 1870—1871. л. 151.

5 Նույն տեղում, գ. 11383, 1872—1873, թ. 135 հակ.։

6 Նույն տեղում, գ. 12084, 1877, թ. 53։

7 Նույն տեղում։

8 АВПР, ф. «Персидский стол», д. 1826, 1883—88гг., л. 128 об.

սիս-արևելյան Իրանի հետ Ռուսաստանի առևտրում կարևոր նշանակություն ձեռք բերեց Աշխաբադ-Ղուչան-Մաշհադ առևտրական ուղին։ Հայկական խոշոր առևտրական ընկերություններից շատերը, որոնք մինչ այդ գործում էին Անդրկովկասում, տեղափոխվեցին Անդրկասպյան մարզ և նշանակալի դիրքեր գրավեցին ինչպես մարզի, այնպես էլ հյուսիս-արևելյան Իրանի տնտեսական կյանքում։ Ռուսական հյուպատոս Կոխանովսկու՝ Աստրաբադի առևտրին նվիրված 1884 թ. զեկուցագրում նշվում է, որ Շահրուդում նշանակալի առևտուր էին վարում 7 հայ վաճառականներ, որոնց տարեկան առևտրական շրջանառությունը կազմում էր 1. 596.550 ռուբլի[9]։ Նրանք Ռուսաստանից Շահրուդ էին ներմուծում երկաթ, չուգուն, պողպատ, շաքար, չիթ և Ռուսաստան էին արտահանում բամբակ, բուրդ, մետաքս։

Արխիվային բազմաթիվ նյութերի և ժամանակակիցների վկայությամբ հայ վաճառականները վճռորոշ դիրք էին գրավում Խորասանի երկրորդ առևտրական կենտրոնի՝ Սարզևարի առևտրում։ Խորասանի առևտրական կյանքին լավատեղյակ Ֆ. Բաումգարտենի վկայությամբ, Սաբզևարում առևտուրը գտնվում էր հիմնականում հայկական 11 առևտրական ընկերությունների ձեռքում, որոնցից 4-ը խոշոր էին[10]։ Մեկ ուրիշ լավատեղյակ ժամանակակցի՝ ռուս զինվորական Լ. Արտամոնովի վկայությամբ, Սաբզևարում գործող 14 խոշոր առևտրական գրասենյակներից 10-ը պատկանում էին հայերին[11]։ Հայ վաճառականների գործունեության վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Խորասանում ռուսական գլխավոր հյուպատոս Պ. Վլասովը։ Նրա տվյալներով հայ վաճառականները Սաբզևարից Ռուսաստան էին արտահանում տարեկան մոտ 13.500 հակ (յուրաքանչյուրը մոտ 5 փութ) բամբակ 1.080.000 ղուռն արժողությամբ (1 ղուռնը մոտավորապես հավասար էր 18—20 կոպ.), 13.000 հակ բուրդ 1.040.000 ղուռն արժողությամբ և մոտ 240.000 ղուռնի չոր միրգ։ Ընդհանուր առմամբ նրանք Սաբզևարից Ռուսաստան էին արտահանում տարեկան մոտ 147.000 փութ ապրանք շուրջ 2.360.000 ղուռն արժողությամբ[12], որը կազմում էր Սաբզևարի ողջ արտահանման ավելի քան 55 %-ը։ Միևնույն ժամանակ հայ վաճառականների ձեռքում էր գտնվում Սարզևարի ներմուծման 45 %-ը։ Սակայն անդրկովկասյան տարանցիկ առևտրական ուղու փակումից հետո էլ Ռուսաստան արտահանվող իրանական ապրանքների մի մասը վերաարտահանվում էր Արևմտյան Եվրոպա։ Անգլիացի Ջ.Քերզոնի վկայությամբ, հայ վաճառականները Սաբզևարից Ռուսաստան էին արտահանում տարեկան 10—12 հազար հակ բուրդ, որի զգալի մասն այնուհետև առաքվում էր Անգլիա[13]։ Սակայն սխալ կլինի վերոհիշյալից եզրակացնել, թե հայ վաճառականների առևտրական գործունեությունն Իրանում սահմանափակվում էր հյուսիսային շրջաններով։ Ռուս-իրանական առևտրական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց նրանք ընդլայնում էին իրենց գործունեության շրջանակները՝ ներթափանցելով Իրանի նորանոր շրջաններ, որոնք մինչ այդ ամբողջովին գտնվում էին անգլիական ազդեցության ոլորտում։ Այսպես՝ 1898 թ. Արզումանով եղբայրների առևտրական տունն իր բաժանմունքը բացեց Քերմանի նահանգի Ռաֆսինջանի օկրուգի Բահրամաբադ քաղաքում և սկսեց բուսախեժ արտահանել Ռուսաստան։ Քերմանի ռուսական հյուպատոս Ա. Ադամովի տվյալներով, Արզումանովների առևտրական տունը Ռուսաստան էր արտահանում տարեկան ավելի քան 20.000 փութ բուսախեժ[14],

---

9 Նույն տեղում, թ. 127 հակ.։

10 Ф. Баумгартен, Поездка по Восточной Персии Л-гв Волынского полка поручика Баумгартена в 1894 г., СПб., 1896, с. 54—55.

11 Л. К. Артамонов, Поездка в Персию: Астрабад-Шахрудский район и Северный Хорасан, Тифлис, 1894, с. 225.

12 Центральный государственный исторический архив СССР (այսուհետև՝ ЦГИА СССР), ф. 23, оп. 7, д. 183, 1893, л. 70—70 об.

13 G. N. Curzon, Persia and the Persian Question, v. 2, London, 1892, p. 510.

14 А. Адамов, Керманская область (сборник консульских донесений (այսուհետև՝ СКД), СПб., 1908, вып. 2, с. 229).

1904 թ. նրանց ներկայացուցիչը Քերմանի շրջակայքից Ռուսաստան էր արտահանել 27.272 փութ բուսախեժ՝ 180.000 ռուբլի արժողությամբ[15]։ Ուշագրավ է այն հանգամանքը, որ մինչև վերոհիշյալ առևտրական տան գործունեության սկիզբը Քերմանի նահանգից բուսախեժն առաքվում էր բացառապես Բանդար Աբբաս և Շիրազ, որտեղից արտահանվում էր Հնդկաստան և Անգլիա։ Բնականաբար, Քերմանի անգլիական հյուպատոսությունն ամեն կերպ խոչընդոտում էր Արզումանովների առևտրական տան գործունեությանը, վախենալով Քերմանում ռուսական ազդեցության ուժեղացումից։ Ռուս աստիճանավոր Մատիսենի արտահայտությամբ «...նրանք (Արզումանովները— Ս. Ս.) անգլիական հյուպատոսի աչքի փուշն էին, չէ որ այդ երկու հայերն արդեն իրենցից ներկայացնում էին ռուսական ազդեցություն...»[16]։

XIX դ. վերջից հայ վաճառականները որոշակի հետաքրքրություն էին ցուցաբերում Սիստանի նկատմամբ։ Իրանի հարավում ընկած այդ նահանգը երկար ժամանակ անգլիացիների անբաժան տիրապետության շրջանն էր։ XX դ. սկզբից հայ վաճառականները կատարեցին առաջին փորձերը Սիստանում տարածելու ռուսական ապրանքները։ Խորասանում լավ հայտնի Տեր-Մկրտիչևների առևտրական տունը սերտ կապեր էր հաստատել Բիրջանդի վաճառականների հետ, որոնց միջոցով ռուսական ապրանքներ էր ներմուծում Սիստան։ Օրինակ, Բիրջանդի հայտնի վաճառականներից մեկը՝ Աղա Սեիդ Հուսեինը, Մաշհադում Տեր-Մկրտիչևների առևտրական ներկայացուցիչ Մելքումովի միջոցով ռուսական ապրանքներ էր ստանում, որոնց մի մասն այնուհետև առաքում էր Հերաթ և Սիստան[17]։ Միևնույն ժամանակ առաջին փորձերն էին կատարվում Ռուսաստան արտահանելու սիստանյան հումքը։ Սիստանում ռուսական փոխ-հյուպատոս Ա. Միլլերը 1901 թ. զեկուցագրերից մեկում հայտնում էր, որ մերվցի հայ վաճառական Միքայել Ասցատուրովը Ռուսաստան է ուղարկել սիստանյան հումքի առաջին քարավանը՝ բաղկացած 14 ուղտաբեռից[18]։

Հայ վաճառականները զբաղվում էին միաժամանակ և՛ արտահանմամբ, և՛ ներմուծմամբ։ Դա պայմանավորված էր Իրանի սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկություններով։ Ներքին շուկայի նեղության, աշխատավորական մասսաների ցածր գնողունակության, իրանական հիմնական վալյուտայի՝ ղռանի, կուրսի անկայունության պայմաններում տնտեսապես ձեռնտու չէր զբաղվել միայն արտահանմամբ կամ միայն ներմուծմամբ։ Այն վաճառականները, որոնք անտեսում էին այս հանգամանքը, զգալի կորուստներ էին կրում։ Սակայն եթե XIX դ. սկզբին նրանց առևտրական շրջանառության մեջ հիմնականը արևմտաեվրոպական արդյունաբերական ապրանքների ներմուծումն էր, ապա XIX դ. վերջից առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում իրանական հումքի արտահանումը՝ գերազանցապես Ռուսաստան։

XIX դ. վերջից Ռուսաստանում տեքստիլ արդյունաբերության բուռն վերելքը կարևոր խթան հանդիսացավ Իրանում բամբակենու մշակության արագ զարգացման համար։ Իրանական բամբակը Ռուսաստանի համար կարևոր նշանակություն ստացավ հատկապես ԱՄՆ-ում քաղաքացիական պատերազմի ժամանակ, երբ Ռուսաստանը զրկվեց բամբակի ներմուծման հիմնական աղբյուրից։ Բամբակի արտադրության արագ աճի հետևանքով, արդեն XIX դ. վերջին այդ ապրանքը գումարային տեսակետից առաջին տեղն էր գրավում Իրանի արտահանման մեջ։ Հենց սկզբից հայ վաճառականները կարևոր դիրք էին գրավել իրանական բամբակի արտադրության և արտահանման մեջ։ Ուղղակի կապեր հաստատելով իրանական արտադրողների հետ, նրանք բամբակ էին մատակարարում Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերության հիմնական կենտրոններին։ Բազմաթիվ աղբյուրների և ժամանակակիցների վկայությամբ, բամբակի արտադրության բոլոր խոշոր կենտրոններում՝ Մազանդարանում,

15 А. Миллер, Торговля Бахрамабада (СКД, СПб., 1907, вып. I, с. 7).

16 АВПР, ф. «Средне-Азиатский стол», оп. 485, д. 723, 1904 г., л. 305 об.

17 Նույն տեղում, գ. 720, 1902 թ., թ. 5։

18 Նույն տեղում, գ. 719, 1901 թ., թ. 42, 44 հակ.։

Աստրաբադում, Խորասանում և այլուր, բամբակի արտահանումը գտնվում էր գլխավորապես հայ վաճառականների ձեռքում։ Միայն 1892 թ. Սաբզևարից Ռուսաստան էր արտահանվել 105.000 փութ բամբակ, որից 67.500 փութը բաժին էր ընկնում հայ վաճառականներին[19]։ Ռուս զինվորական բենդերևի տվյալներով, որոնք վերցված են ռուսական հյուպատոսությունից, հայ վաճառականները Շահրուդից Ռուսաստան էին արտահանում տարեկան մոտ 92.000 փութ բամբակ՝ 460.000 ռուբլի արժողությամբ։ Ուշագրավ է, որ Շահրուդից բամբակի տարեկան արտահանումը կազմում էր մոտավորապես 597.000 ռուբլի[20]։

Իրանական բամբակի արտագրության խոշորագույն կենտրոններից մեկը Նիշաբուրն էր, որտեղի բամբակը որակով առաջինն էր ամբողջ Իրանում։ Ռուս աստիճանավոր Ժ. Կասիսը, որը երկար տարիներ վարել էր Հաշվավարկային բանկի Սաբզևարի բաժանմունքը և քաջատեղյակ էր Խորասանի տնտեսական կյանքին, նշում է, որ Նիշաբուրից Ռուսաստան էր արտահանվում տարեկան մոտ 120.000 փութ բամբակ՝ 4,2 մլն զուտ արժողությամբ։ Նրա վկայությամբ, Նիշաբուրյան բամբակի հիմնական արտահանողները «Տեր-Մկրտիչև եղբայրներ», «Հախնազարյանց», «Աբիյանց և Ընկ.», «Խալափյանց և Ընկ.» առևտրական տները և Պոզնանսկու բաժնետիրական ընկերությունն էին[21]։ Բացի նրանցից, Նիշաբուրյան բամբակի արտահանմամբ զբաղվում էին նաև մյուս հայ վաճառականները՝ Ղահրամանյանցը, Մեհրաբյանցը, Ադամյանցը, Դանիելյանցը և ուրիշներ։

Հայ վաճառականները մեծ քանակությամբ բամբակ էին գնում նաև Մազանդարանում, Աստրաբադում, Սպահանում, Իրանական Ադրբեջանում։ Օրինակ Բանդար Գյազում բամբակի ողջ առևտուրը գտնվում էր «Բեգլարյանց և Կարապետյանց», «Նասիբյանց և Տեր-Պետրոսյանց» ընկերությունների[22], ինչպես նաև Թումանյանցների առևտրական տան ձեռքում։

Իրանի արտահանման կարևոր ճյուղերից մեկը չոր մրգերի արտահանումն էր՝ գերազանցապես Ռուսաստան։ Այս ապրանքի արտահանման մեջ ևս հայ վաճառականները վճռական դեր էին խաղում։ Այսպես, Ուրմիայի շրջանում, որտեղից Ռուսաստան էր արտահանվում տարեկան 600.000—1.000.000 փութ սաբզա (ընտիր չամիչ), այդ ապրանքի գլխավոր արտահանողներն էին Արզումանյանցները, Հասրաթյանցները, Բուղադյանցները, Մանասարյանցները, Զարգարյանցները, Զոհրաբյանց և Սուլխանյանց ընկերությունը և ուրիշներ[23]։ Նպաստավոր տարիներին, երբ բերքն առատ էր լինում և համեմատաբար էժան, հայ վաճառականները չոր միրգ էին արտահանում ոչ միայն սահմանային մոտիկ շրջաններից, այլև Իրանի կենտրոնական մասից։ Միայն 1895 թ. նրանք Թուրշիզից Ռուսաստան էին արտահանել 10.000 թումանի (1 թումանը մոտավորապես հավասար էր 1,7—2 ռուբլու) քիշմիշ և 15.000 թումանի այլ չոր միրգ[24]։

Հայկական առևտրական որոշ տներ մասնագիտանում էին հատկապես չոր մրգի արտահանման մեջ։ XIX դ. վերջի—XX դ. սկզբի Իրանի խոշորագույն առևտրական ընկերություններից մեկը՝ Թումանյանցների առևտրական տունը, իր գործունեության սկզբում Ռուսաստան էր արտահանում գլխավորապես չոր միրգ և մետաքս։ Անցած դարի վերջին Թումանյանցները Իրանից Ռուսաստան

---

19 ЦГИА СССР, ф. 23, оп. 7, д. 183, л. 67, 70.

20 Бендерев, Астрабад-Бастамский район Персии. Поездка по району в 1902 г. генерального штаба полковника Бендерева, Ашхабад, 1904, приложение, с. 58—59.

21 Ж. Я. Кассис, Экономическое положение современной Персии. Торговые и финансовые интересы России на персидском рынке, Киев, 1915, с. 4.

22 Г. Каэм, «Персидские земли» или «Новая апельсиния» (К вопросу о приобретении земель в Северной Персии), Красноводск, 1914, с. 107—108.

23 ЦГИА СССР, ф. 600, оп. 10, д. 222, 1908—10гг., л. 73.

24 Ф. Баумгартен, նշվ. աշխ., էջ 73—74.

էին արտահանում ավելի քան 1 մլն ռուբլու ապրանք, որից ավելի քան 300.000 ռուբլին կազմում էր չոր մրգերի արտահանումը[25]։

Իրանահպատակ և ռուսահպատակ հայ վաճառականները կարևոր դեր էին խաղում իրանական մետաքսի արտահանման մեջ։ Երկար ժամանակ մետաքսը կազմում էր Իրանի արտահանման գլխավոր ճյուղը։ Սակայն 1864 թ. մետաքսաորդի հիվանդության պատճառով իրանական մետաքսի արտադրության մեջ խոր ճգնաժամ սկսվեց։ 1869 թ. մետաքսի արտադրանքն Իրանում կազմում էր 1864 թ. արտադրանքի 1/5 մասը։ Որոշ շրջաններում թթենու պլանտացիաների փոխարեն սկսեց զարգանալ ափիոնի, ծխախոտի, ձիթապտղի արտադրությունը[26]։ Միայն 90-ական թվականների սկզբին, հունական Պասխալիդիս ընկերության ջանքերի շնորհիվ, մետաքսի արտադրությունը նորից սկսեց արագորեն զարգանալ։ 1893 թ. վերոհիշյալ ընկերության ներկայացուցիչ Բեզանոսը Բուրսայից Գիլան ներմուծեց պաստերիզացված մետաքսասերմեր։ Դրանից անմիջապես հետո հայ վաճառականները նույնպես սկսեցին պաստերիզացված մետաքսասերմեր ներմուծել նախ Բուրսայից, ապա և Երևանի նահանգից։ Գիլանում ռուսական հյուպատոս Ա. Շտրիտերի վկայությամբ, հայերը և պարսիկները աստիճանաբար դուրս էին մղում հույներին և եվրոպացիներին բոժոժի առևտրից[27]։ 1906 թ. հայ վաճառականները Գիլանում գնել էին 95.000 բաթման (1 բաթմանը մոտավորապես հավասար է 3 կգ) բոժոժ, որը կազմում էր Գիլանում գնված ողջ բոժոժի 1/5 մասը[28]։ Նրանցից ոմանք համաձայնության մեջ էին մտնում հունական առևտրական տների հետ և համատեղ գնումներ կատարում։ Նման համաձայնությունը հնարավորություն էր տալիս դիմանալ առևտրական մրցակցությանը և միասնական պահանջներ ներկայացնել արտադրողներին։ Այսպես, Թումանյանցների առևտրական տունը 1905 թ. հույն խալիկաոսի ընկերակցությամբ Գիլանում գնել էր 27.000 բաթման բոժոժ, որն այդ տարվա խոշորագույն գնումներից էր[29]։ Հաջորդ՝ 1906 թ. Թումանյանցները համաձայնության մեջ մտան մեկ այլ խոշոր հունական ընկերության՝ Պապոդոպուլոյի հետ։ Այդ համաձայնության շնորհիվ վերոհիշյալ առևտրական տները կարողացան Ռեշտում և Լահիջանում գնել 34.000 բաթման բոժոժ։ Բացի այդ, Թումանյանցները Էնզելիում գնել էին ևս 7.000 բաթման բոժոժ[30]։

XIX դ. վերջին XX դ. սկզբին իրանական արտահանման մեջ զգալի էր ձկնեղենի տեսակարար կշիռը։ Անցած դարի 70-ական թվականներից Կասպից ծովի հարավային ափին՝ Աստարա-Ատրեկ հատվածում, ձկնորսության մենաշնորհ իրավունքը պատկանում էր աստրախանցի հայ վաճառական Լիանոզովներին։ Կարճ ժամանակում նրանք ստեղծեցին ժամանակակից սարքավորումներով զինված ձկնորսարաններ, որոնց ամբողջ արտադրանքն արտահանվում էր Ռուսաստան, իսկ խավիարը՝ Ռուսաստանի վրայով Արևմտյան Եվրոպա։ 1904—1905 թթ. ձկան արտահանումն Իրանից կազմում էր 36.106.460 ղրան, իսկ հաջորդ տարի՝ 39.281.975 ղրան[31], որը երկրորդ ցուցանիշն էր Իրանի արտահանման մեջ։

Չնայած հայ վաճառականների մեծ մասի համար վճռորոշ արտահանումն էր, սակայն ուսումնասիրվող ժամանակաշրջանում նրանք նշանակալի դեր էին խաղում նաև Իրանի ներմուծման մեջ։ Ի տարբերություն արտահանման, ներմուծման մեջ հայ վաճառականների մասնագիտացումն ավելի ուժեղ էր։ Առևտրական խոշոր ընկերությունները մասնագիտանում էին 1 կամ 2 տե-

25 Նույն տեղում, էջ 287։

26 G. Curzon, Persia and the Persian Question, v. 1, London, 1892, p. 368.

27 А. Штриттер, Шелководство в Гиляне в 1906 г. (СКД, СПб., 1907, вып. 4, с. 317).

28 АВПР, ф. «Миссия в Персии», оп. 528В, д. 25, 1904 г., л. 35—36 об.

29 А. Штриттер, նշվ. աշխ., էջ 317.

30 АВПР, ф. «Миссия в Персии», оп. 528, д. 25, л. 35—36.

31 С. С. Остапенко, Внешние рынки России. Персидский рынок и его значение для России, Киев, 1913, приложение, с. 162—163.

սակի արդյունաբերական ապրանքների ներմուծման մեջ։ Այսպես, հյուսիս-արևելյան Իրանում գործող խոշոր ընկերություններից մեկը՝ Տեր-Մկրտիչև եղբայրների առևտրական տունը, Ռուսաստանից Իրան էր ներմուծում գերազանցապես բամբակյա գործվածքեղեն։ 1908—1909 տնտեսական տարում Մաշհադ ներմուծված 9000 հակ ռուսական բամբակյա գործվածքից 1500 հակը բաժին էր ընկնում Տեր-Մկրտիչևներին[32]։ Ուղղակի կապեր ունենալով Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերողների հետ և զգալի վարկեր ստանալով Աշխաբադի և Մոսկվայի բանկերից, նրանք հնարավորություն ունեին ռուսական կտորեղենը վաճառել համարյա գործարանային գներով և Խորասանի շուկայում հաջողությամբ մրցել անգլիական էժան ապրանքների հետ։ Աշխաբադում աշխատելու 30 տարիների ընթացքում նրանք ռուսական կտորեղենի վաճառքից ավելի քան 2 մլն ռուբլու շահույթ էին ստացել[33]։

Սաբզևարում ռուսական կտորեղենի նշանակալի առևտուր էր վարում «Ղուլյանց և Ընկ.» առևտրական տունը։ XIX դ. 90-ական թվականներին այս ընկերությունը Սաբզևար էր ներմուծում տարեկան 3000 փութ ռուսական կտորեղեն՝ մոտ 100.000 ռուբլի արժողությամբ[34]։

Դարի վերջից ռուսական գործվածքեղենի առևտրով զբաղվող հայ վաճառականներն ավելի ու ավելի մեծ չափով էին զգում պարսիկ և ադրբեջանցի վաճառականների մրցակցությունը։ Դա նրանց ստիպում էր միավորել իրենց կապիտալները և ստեղծել բաժնետիրական ընկերություններ, որոնք ավելի կենսունակ էին առևտրական սուր մրցակցության պայմաններում։ XX դ. սկզբին Խորասանում հանդես եկավ «Տեր-Սարգսյանց, Արուտչև և Գևորգյանց» առևտրական տունը, որը ռուսական կտորեղենի նշանակալի առևտուր էր վարում։ 1908—1909 թթ. առևտրական այս տունը Մաշհադ էր ներմուծել մոտ 10.000 փութ բամբակյա գործվածքեղեն, որը կազմում էր Մաշհադ ներմուծված նույնատիպ ապրանքի 1/4-ը[35]։

Եթե հյուսիս-արևելյան Իրանում Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերության արտադրանքը համեմատաբար հեշտությամբ էր մրցում անգլիականի հետ, ապա Ատրպատականում երկար ժամանակ սուր պայքար էր մղվում ռուսական, անգլիական, գերմանական և ավստրիական արտադրության տեքստիլ ապրանքների միջև։ Այստեղ միայն տեղական շուկայի և սպառողների պահանջների գերազանց իմացության դեպքում կարելի էր հաջողությամբ մրցել անգլիական և գերմանական ապրանքների հետ։ Հենց այս հատկությունների և Մոսկվայի ու Լոձի գործարանատերերի հետ ունեցած գործարար կապերի շնորհիվ հայ վաճառականները զգալի քանակությամբ ռուսական գործվածքեղեն էին ներմուծում Ատրպատական։ Մասնավորապես Ավագյանցները Թավրիզում, Սալմաստում, Ուրմիայում և Մարաղայում վաճառում էին տարեկան ավելի քան 400.000 ռուբլու ռուսական կտորեղեն[36]։ Հաջողությամբ մրցելով անգլիական և գերմանական ապրանքների հետ, նրանք ընդլայնում էին իրենց առևտրական շրջանառությունը, առևտրի մեջ ներառնելով Ատրպատականի նորանոր շրջաններ։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին առևտրական տան ներկայացուցիչ Ավագ Ավագյանցը դիմել էր Ատրպատականում ռուսական գերագույն հյուպատոսին, խնդրելով օգնել գործարար կապեր հաստատելու Ագարի, Սերաբի, Արդաբիլի, Բինաբի, Սուլդուզի, Սոուջբուլաղի, Զենջանի, Համադանի, Քերմանշահի, Մակվի վաճառականների հետ՝ այդ շրջաններում ռուսական գործվածքեղեն վաճառելու նպատակով։ Առևտր-

---

32 ЦГИА СССР, ф. 600, оп. 10, д. 222, 1908—1910, л. 43.

33 А. Ф. Губаревич-Радобылский, Значение Туркестана в торговле России с сопредельными странами Азии («Материалы для изучения хлопководства», вып. 2, СПб., 1912, с. 203).

34 ЦГИА СССР, ф. 23, оп. 7, д. 183, л. 69.

35 Նույն տեղում, ֆ. 600, ց. 10, գ. 222, թ. 43։

36 Նույն տեղում, ֆ. 23, ց. 11, գ. 353, 1912, թ. 67։

բական տան ներկայացուցիչները նպատակ ունեին այդ շրջաններում ապառիկ բաց թողնել 200.000—250.000 ռուբլու կտորեղեն[37]։

Անգլիական բամբակյա գործվածքեղենի մրցակցությանը դիմանալու համար Ավագյանցները նախօրոք գործարանատերերին էին հանձնում այն գործվածքների էսքիզները, որոնք առավել մեծ պահանջարկ էին վայելում տեղական շուկայում և էժան էին։ Ինչպես Ավագյանցները, այնպես էլ ռուսական գործվածքեղենի առևտրով զբաղվող մյուս հայ վաճառականները վարում էին գերազանցապես մեծածախ առևտուր և կտորեղենը բաց էին թողնում ապառիկ։

Մինչև XX դ. սկիզբը Իրանում այն կարծիքն էր արմատավորված, որ ռուսական բրդյա գործվածքեղենը իրանական շուկայում չի կարող մրցել ավստրիական նույնատիպ ապրանքի հետ, որի գլխավոր ներմուծողները նույնպես հայ վաճառականներն էին։ Սակայն 1903 թ. Ի. Թադևոսյանը, որը երկար տարիներ ավստրիական բրդյա գործվածքի նշանակալի առևտուր էր վարել և լավատեղյակ էր այդ գործին, փորձ կատարեց Ատրպատական ներմուծել ռուսական նույնատիպ ապրանք։ Այդ նպատակով նա նախօրոք եղավ Վիեննայում, որտեղ համապատասխան կտորների էսքիզներն անելուց հետո մեկնեց Լոձ։ Այդ էսքիզների համաձայն Լոձում պատրաստված կտորները (85 հակ՝ մոտ 40.000 ռուբլի արժողությամբ) մեծ հաջողությամբ վաճառվեցին Թավրիզում[38]։

Անդրկովկասյան տարանցիկ առևտրական ուղու փակումից անմիջապես հետո հայ վաճառականները սկսեցին մարսելյան շաքարի փոխարեն Իրան ներմուծել ռուսականը։ Կարճ ժամանակում նրանց ջանքերով ռուսական շաքարը նվաճեց հյուսիս-արևելյան Իրանի շուկան։ Սակայն Ատրպատականում ռուսական շաքարը դեռ երկար ժամանակ զգում էր մարսելյանի մրցակցությունը։ 1885 թ. մի խումբ Թիֆլիսեցի հայ վաճառականներ փորձի նպատակով Թավրիզ ներմուծեցին 3.196 փութ շաքար՝ 20.634 ռուբլի արժողությամբ[39]։ Այս քանակությունն ինքնին շատ չնչին էր, բայց այն ցույց տվեց, որ ռուսական շաքարի ներմուծումը հեռանկարային գործ է։ Ընդամենը մոտ քառորդ դարի ընթացքում ռուսական շաքարը լիովին նվաճեց Ատրպատականի շուկան։ 1909--1910 տնտեսական տարում այնտեղ ներմուծվել էր 16.775.761 ղռանի շաքար, որից 16.771.336 ղռանի՝ ռուսական[40]։ Ներմուծման նման վիթխարի աճը մեծ չափով հայ վաճառականների գործունեության արդյունք էր։ Օրինակ, Ուրմիայում, որտեղ ռուսական շաքարի ներմուծումը կազմում էր 1.000.000 ռուբլի, գլխավոր ներմուծողների թվում էին Մանասարյանց, Հարությունյանց, Շահգելդյանց, Ջարդարյանց եղբայրները, Ջհանգիր Գուլոյանցը և ուրիշ հայ վաճառականներ։ Նրանցից շատերը հաճախ համաձայնության մեջ էին մտնում Ռուսաստանի շաքար արդյունաբերողների հետ, միջնորդի դեր խաղալով նրանց և իրանական շուկայի միջև։ Այսպես Թիֆլիսեցի առաջին գիլդիայի վաճառական Կարապետ Մութաֆովը համաձայնության մեջ էր մտել Գնիվենի շաքարի գործարանի տիրոջ հետ և Իրան էր արտահանում այդ գործարանի շաքարը։ 1897 թ. նա իր լիազորների միջոցով Թավրիզ էր արտահանել 13.879 փութ շաքար[41]։

Հայ վաճառականները զգալի քանակությամբ շաքար էին ներմուծում հյուսիս-արևելյան Իրան։ Բենդերևի վկայությամբ, նրանք Ռուսաստանից Շահրուդ էին ներմուծում տարեկան ավելի քան 130.000 փութ շաքար (մոտ 390.000 ռուբլու)[42]։ 1908—1909 տնտեսական տարում միայն Տեր-Մկրտիչների առևտրական տունը և «Սարդսյանց, Արուտչև և Գևորգյանց» ընկերությունը Մաշհադ էին ներմուծել մոտ 120.000 ռուբլու ռուսական շաքար[43]։

---

37 Նույն տեղում։

38 Նույն տեղում, ֆ. 600, ց. 10, գ. 218, 1905, թ. 3, 13 հակ—14։

39 АВПР, ф. «Персидский стол», д. 1826, л. 180 об.

40 ЦГИА СССР, ф. 23, оп. II, д. 353, л. 17 об.

41 ЦГИА Гр. ССР, ф. 380, д. 434, л. 95.

42 Бендерев, նշվ. աշխ., հավելված, էջ 59.

43 ЦГИА СССР , ф. 600, оп. 10, д. 222, л. 36 об.

XIX դ. վերջից Բաքվում նավթարդյունաբերության բուռն վերելքի հետևանքով արագորեն աճում էր թորած նավթի ներմուծումն Իրան։ Ներմուծման այս բնագավառում ևս հայ վաճառականներն ամուր դիրքեր ունեին։ Ուղղակի կապեր հաստատելով Բաքվի նավթարդյունաբերողների հետ, նրանք թորած նավթ էին ներմուծում ոչ միայն Իրանի հյուսիսային, այլև կենտրոնական և հարավային շրջանները։ Միայն Բուղաղյանցների առևտրական տունն Իրան էր ներմուծում ամսական 4000 փութ թորած նավթ, իսկ Հովհաննես Սուլթանյանցը՝ 3000 փութ[44]։ Սուր մրցակցության պայմաններում հայ վաճառականներից ոմանք ձգտում էին իրենց մենաշնորհը դարձնել թորած նավթի ներմուծումն Իրան։ Այս ապրանքի խոշորագույն ներմուծողներից մեկը՝ Սարուխանովը, մի քանի պարսիկ վաճառականների հետ հիմնել էր սինդիկատ, որն ամբողջովին իր ձեռքն էր վերցրել թորած նավթի ներմուծումն Էնզելի և Ռեշտ։

Մինչև XX դ. սկիզբը հայ վաճառականները Աշխաբադի վրայով ազատորեն թորած նավթ էին ներմուծում Խորասան, որտեղից այն առաքվում էր նաև Եզդ, Քերման, Ղաշան և այլ վայրեր։ Սակայն 1902 թ. հայ վաճառական Օսիպյանցին հաջողվեց համաձայնության գալ նավթարդյունաբերող Նոբելի հետ. ըստ այդ համաձայնության վերջինս պարտավորվում էր Խորասան արտահանվող թորած նավթը վաճառել միայն Օսիպյանցին։ Անշուշտ, դա առաջ բերեց մյուս հայ վաճառականների դժգոհությունը և պայմանագիրը, որը կնքվել էր 1 տարի ժամանակով, այնուհետև չնորոգվեց[45]։

XIX դ. վերջին— XX դ. սկզբին Իրանում գործող հայ վաճառականների շրջանում գերակշռում էին մանր ու միջին առևտրականները։ Սակայն արտաքին ու ներքին առևտրի աճին զուգընթաց XIX դ. վերջից հանդես եկան հայկական առաջին խոշոր ընկերությունները, որոնք Իրանում առևտրական նշանակալի շրջանառություն ունեին։ XIX դ. վերջին— XX դ. սկզբին Իրանի տնտեսական կյանքում առանձնահատուկ տեղ էր գրավում վերը նշված Թումանյանցների առևտրական տունը, որը լայն գործունեություն էր ծավալել երկրի տնտեսության ամենատարբեր ոլորտներում։ Իրենց գործունեությունը սկսելով անցած դարի կեսերին, Թումանյանցները արագորեն հարստացան ի հաշիվ իրանական չոր մրգերի և մետաքսի արտահանման և ռուսական մետաղյա իրերի ներմուծման[46]։ Արդեն դարի վերջին նրանց առևտրական շրջանառությունն անցնում էր 1 մլն ռուբլուց, իսկ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին առևտրական տան կապիտալն Իրանում կազմում էր 4,5 մլն թուման[47]։ Խորասանում լայն գործունեություն էր ծավալել Տեր-Մկրտիչևների առևտրական տունը, որի շրջանառությունը XIX դ. վերջին անցնում էր 800.000 ռուբլուց[48]։ Թեհրանում և նրա շրջակայքում նշանակալի առևտուր էր վարում Ասլանյանցը, որը Իրանից Ռուսաստան էր արտահանում չոր միրգ, մորթեղեն, գառնենի և Իրան էր ներմուծում շաքար։ Նրա առևտրական շրջանառությունը նույնպես անցնում էր 800.000 ռուբլուց[49]։ Արագորեն աճում էր Արզումանով եղբայրների առևտրական տան շրջանառությունը, որի գործունեությունն Իրանում սկսվել էր XIX դ. 90-ական թվականների վերջին։ Թեհրանում ռուսական գերագույն հյուպատոս

---

[44] Նույն տեղում, ֆ. 21, ց. 11, գ. 105, 1915, թ. 106—107։

[45] АВПР, ф. «Миссия в Персии», оп. 528с/1, д. 483, 1890—93, л. 34—34 об.

[46] تاریخچه سی ساله بانك ملی ایران ، ۱۳۰۷ — ۱۳۳۷ ، تهران ، ۱۳۳۸ ، ص ۴۸ — ۴۹

[47] Р. Сендов, Иранская буржуазия в конце XIX—начале XX века, М., 1974, с. 91.

[48] Б. Маннанов, Из истории русско-иранских отношений в конце XIX—начале XX века, Ташкент, 1964, с. 108.

[49] Wilhelm Litten, Persien von der „Penetration pacifique" zum „Protektorat. Urkunden und Tatsachen zur Geschichte. der europaischen „penetration pacifique. in Persien 1860—1919. Berlin und Leipzig. 1920, p. 187.

Պոխիտոնովի տվյալներով, նրանց առևտրական շրջանառությունը կազմում էր 400.000 թուման[50]։

Այսպիսով, փաստերը ցույց են տալիս, որ նշված ժամանակաշրջանում հայ վաճառականների գործունեությունը մեծ չափով նպաստեց ռուս-իրանական առևտրական հարաբերությունների զարգացմանը և Իրանում արևմտաեվրոպական երկրների հետ Ռուսաստանի առևտրական հաջող մրցակցությանը։

АРМЯНСКОЕ КУПЕЧЕСТВО В РУССКО-ИРАНСКИХ ТОРГОВЫХ СНОШЕНИЯХ (КОНЕЦ XIX—НАЧАЛО XX ВВ.)

САМВЕЛ СТЕПАНЯН

Резюме

В конце XIX—начале XX вв. армянские купцы играли важную роль в развитии русско-иранской торговли. Установив деловые связи с российскими промышленниками, они ввозили в Иран крупные партии мануфактуры, сахара, керосина, металлических изделий. Имея представителей в главных торговых центрах северного Ирана, армянские торговые дома и товарищества играли определяющую роль в таких важных статьях иранского экспорта, как хлопок, сухофрукты, шерсть, рыбный товар и т. п.

Армянские купцы вели в основном оптовую торговлю и совершали сравнительно крупные торговые обороты. Ориентируясь в основном на российскую промышленность, они во многом способствовали успешному экономическому соперничеству России с западноевропейскими державами в Иране.

---

50 ЦГИА СССР, ф. 23, оп. 11, д. 109, 1911 г., л. 3.